ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

Պատվիրատուն՝ ՀՀ մշակույթի նախարարությունը, ստորև ներկայացնում է իր կարիքների համար պատմության և մշակույթի անշարժ հուշարձանի նորոգման, վերականգնման և տարածքի բարեկարգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ***ՀՀՄՆ-ԳՀԱՇՁԲ-17/54*** ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում **2017 թվականի դեկտեմբերի 27-ին** կնքված N ***«ՀՀՄՆ-ԳՀԱՇՁԲ-17/54-3»*** ծածկագրով պայմանագրում **2018 թվականի հունիսի 28-ին** կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ N 1: ՀՀ Լոռու մարզի Լոռի բերդ համայնքի Լոռի բերդ ամրոցի գլխավոր մուտքին հարակից պարսպապատերի մասնակի վերականգնման, ենթակառուցվածքների զարգացման և տարածքի բարեկարգման աշխատանքների պատշաճ կատարման համար Կատարողի կողմից առաջարկվել է պայմանագրի ժամկետը երկարաձգել մինչև 30 օրացույցային օրով:

Փոփոխության նկարագրություն N 1: Պայմանագրի 1.3 կետում և N 2 «Օրացուցային գրաֆիկ» հավելվածում «30.06.2018 թ.» բառերը փոխարինվել են «27.07.2018 թ.» բառերով:

Փոփոխության նկարագրություն N 2: Պայմանագրի ժամկետի երկարաձգմամբ պայմանավորված՝ Պայմանագրի N 3 «Վճարման ժամանակացույց» հավելվածը շարադրվել է նոր խմբագրությամբ:

Փոփոխության հիմնավորում N 1: Հուշարձանի նախագծանախահաշվային փաստաթղթերում կատարվելիք փոփոխություններ:

Փոփոխության հիմնավորում N 2: ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 56-րդ կետի 4-րդ ենթակետ :

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Ն. Կարապետյանին:

Հեռախոս՝ 011 58-51-78:

Էլ. փոստ՝ cultproject@mail.ru:

Պատվիրատու՝ ՀՀ մշակույթի նախարարություն

4032

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N1

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ N «ՀՀՄՆ-ԳՀԱՇՁԲ-17/54-3» ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան «28» 06 2018 թ.

ՀՀ մշակույթի նախարարությունը, ի դեմս նախարարության կանոնադրության հիման վրա գործող աշխատակազմի ղեկավար Ս. Մուրադյանի, (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Վանյան և Հովսեփյան» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ս. Հովսեփյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, (երկուսը միասին այսուհետ՝ Կողմեր) կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

1. Համաձայնագրի առարկան

1.1. Հիմք ընդունելով կողմերի միջև 2017 թվականի դեկտեմբերի 27-ին կնքված պետության կարիքների համար կապալային աշխատանքների կատարման պետական գնման N «ՀՀՄՆ-ԳՀԱՇՁԲ-17/54-3» պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5-րդ և 8.6-րդ կետերը և առաջնորդվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 56-րդ կետի 4-րդ ենթակետով՝ Պատվիրատուն և Կատարողը համաձայնության են եկել Պայմանագրում կատարել հետևյալ փոփոխությունները.

1.1.1 Պայմանագրի 1.3 կետում **«30.06.2018 թ.»** բառերը փոխարինել **«27.07.2018 թ.»** բառերով:

1.1.2 Պայմանագրի N 2 «Օրացուցային գրաֆիկ» հավելվածում աշխատանքների կատարման ժամկետի ավարտը՝ **«30.06.2018 թ.»** բառերը փոխարինել **«27.07.2018 թ.»** բառերով:

1.1.3 Պայմանագրի N 3 «Վճարման ժամանակացույց» հավելվածը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Համաձայնագրի գործողության ժամկետը

2.1. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի կողմից ստորագրվելու պահից և գործում է մինչև Պայմանագրով սահմանված երկու Կողմերի պարտավորությունները լրիվ ծավալով ու պատշաճ կատարելու ավարտի ժամկետը:

2.2. Կողմերի միջև ձեռք բերված՝ սույն համաձայնագրին հակասող բոլոր նախկին պայմանավորվածությունները դադարում են գործել սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելու պահից:

3. Այլ պայմաններ

3.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելու պահից կազմում է Պայմանագրի անբաժանելի մասը:

3.2. Կողմերի պատասխանատվությունը որոշվում է Հայաստանի Հանրապետությունում գործող օրենսդրությանը համապատասխան:

3.3. Սույն համաձայնագիրը և հավելվածները կազմված են 2 (երկու) էջից, կնքվում են երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ մշակույթի նախարարություն
Հասցեն՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3
Կառավարական շենք N 2,
հեռ.՝ (011) 58-51-78
ՀՎՀՀ 02508054,
h/h 900011017630
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի
գործառնական վարչությունում

Աշխատակազմի ղեկավար՝
(ստորագրություն) **Ս. Մուրադյան**

Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

,Վանյան և Հովսեփյանե ՍՊԸ
Հասցեն՝ ՀՀ Լոռու մարզ ք. Վանաձոր, Ռուսթավի 7/12
հեռ.՝ (098) 89-65-75, (041) 13-71-85
ՀՎՀՀ 06944032
h/h 1570021333510100
,Ամերիաբանկ Վանաձոր Մ/Ճ

Տնօրեն՝
(ստորագրություն) **Ս. Հովսեփյան**

Կ.Տ

Հավելված

„28„ 06 2018թ.

կնքված N 1 համաձայնագրի

Հավելված 3

,27ե դեկտեմբեր 2017թ. կնքված

,ՀՀՄՆ-ԳՀԱՇՁԲ-17/54-3ե ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի										
հրավերով նախատես-ված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2017 և 2018 թվականներին՝ ըստ ամիսների, այդ թվում**								
			2017թ.	2018թ.							
			դեկտեմբեր	հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	**Ընդամենը**
3	45451600/28	ՀՀ Լոռու մարզի Լոռի բերդ համայնքի Լոռի բերդ ամրոցի գլխա-վոր մուտքին հարակից պարսպա-պատերի մասնակի վերականգնման, ենթակա-ռուցվածքների զարգացման և տարածքի բարեկարգման աշխատանքներ	12160000	12160000	12160000	12160000	12160000	12160000	12160000	12800000	**12800000**

* *Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ածողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ մշակույթի նախարարություն
Հասցեն՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3
Կառավարական շենք N 2,
հեռ.՝ (011) 58-51-78
ՀՎՀՀ 02508054,
հ/հ 900011017630
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի
գործառնական վարչությունում

Աշխատակազմի ղեկավար՝
(ստորագրություն)
Կ.Տ
Ս. Մուրադյան

ԿԱՊԱԼԱՌՈՒ

,Վանյան և Հովսեփյանե ՍՊԸ
Հասցեն՝ ՀՀ Լոռու մարզ ք. Վանաձոր, Ռուսթավի 7/12
հեռ.՝ **(098)89-65-75. (041) 13-71-85**
ՀՎՀՀ **06944032**
հ/հ **1570021333510100**
,Ամերիաբանկ Վանաձոր Մ/Ճ

Տնօրեն՝
(ստորագրություն)
Կ.Տ
Ս. Հովսեփյան

AMERIABANK

28.06.2018թ.
O.AB.100.11CB.ESC.2.3219.18

Բենեֆիցիար՝
ՀՀ ֆինանսների նախարարություն

ԲԱՆԿԱՅԻՆ ԵՐԱՇԽԻՔ

1. Սույն Երաշխիքը (այսուհետ՝ Երաշխիք) հանդիսանում է ՀՀ մշակույթի նախարարության և «ՎԱՆՅԱՆ ԵՎ ՀՈՎՍԵՓՅԱՆ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Պրինցիպալ) միջև 27.12.2017թ. կնքված «Պետության կարիքների համար կապիտալային աշխատանքների կատարման պետական գնման» թիվ ՀՀՄՆ-ԳՀԱՇՁԲ-17/54-3 պայմանագրից (այսուհետ՝ Պայմանագիր) բխող՝ Պրինցիպալի պարտավորությունների (այսուհետ՝ Երաշխավորված պարտավորություններ) պատշաճ կատարման ապահովում՝ մինչև 8,958,057.00 (ութ միլիոն ինը հարյուր հիսունութ հազար հիսունյոթ) ՀՀ դրամ գումարի չափով:

2. Երաշխիքով «Ամերիաբանկ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Երաշխիք տվող անձ) պարտավորվում է ՀՀ ֆինանսների նախարարության (այսուհետ՝ Բենեֆիցիար)՝ սույն Երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ Պահանջ) Բենեֆիցիարին անվերապահորեն վճարել մինչև 8,958,057.00 (ութ միլիոն ինը հարյուր հիսունութ հազար հիսունյոթ) ՀՀ դրամ՝ Պահանջն ստանալուց հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է Բենեֆիցիարի կողմից Պահանջում նշված հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն Երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն Երաշխիքից բխող Բենեֆիցիարի՝ Երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի՝ Երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Սույն Երաշխիքը գործում է մինչև 30 հուլիսի 2018թ. ներառյալ:

6. Բենեֆիցիարը Պահանջը ներկայացնում է Երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Ընդ որում, Պահանջում պետք է նշվի, թե Պրինցիպալը որ պարտավորությունն է խախտել:

7. Երաշխիք տվող անձը Բենեֆիցիարի կողմից ներկայացված Պահանջը ստանալուց հետո առավելագույնը 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված Պահանջը՝ սույն Երաշխիքի պայմաններին դրա համապատասխանությունը պարզելու համար:

8. Այն դեպքում, երբ Բենեֆիցիարը ներկայացրել է սույն Երաշխիքի պայմաններին համապատասխանող Պահանջ, իսկ Երաշխիք տվող անձը Երաշխիքով սահմանված ժամկետում չի վճարում Պահանջում նշված գումարն ամբողջությամբ, ապա Բենեֆիցիարն իրավունք ունի Երաշխիք տվող անձի բանկից՝ բացառությամբ ՀՀ կենտրոնական բանկի, պահանջել Երաշխիք տվող անձի հաշվից իրեն վճարել Պահանջում նշված գումարը՝ ներկայացնելով սույն Երաշխիքի իր օրինակը:

9. Այն դեպքում, երբ Բենեֆիցիարը ներկայացրել է սույն Երաշխիքի պայմաններին համապատասխանող Պահանջ, իսկ Երաշխիք տվող անձը Երաշխիքով սահմանված

AMERIABANK CJSC
2 V. Sargsyan Str., Yerevan
0010, Republic of Armenia
T: (374 10) 56 11 11
F: (374 10) 51 31 33
www.ameriabank.am
info@ameriabank.am

HERE AND BEYOND

ժամկետում չի վճարում Պահանջում նշված գումարն ամբողջությամբ, այդ թվում՝ երբ Բենեֆիցիարի կողմից սույն Երաշխիքի 8-րդ կետում ամրագրված իր իրավունքից օգտվելու դեպքում Երաշխիք տվող անձի բանկային հաշվում առկա չեն բավարար միջոցներ, ապա Երաշխիք տվող անձը իր պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար Բենեֆիցիարին վճարում է տուժանք՝ յուրաքանչյուր ուշացված օրվա համար՝ Պահանջում նշված վճարման ենթակա գումարի 0.05 տոկոսի չափով:

10. Երաշխիք տվող անձը մերժում է Բենեֆիցիարի Պահանջը, եթե՝

ա) Պահանջը չի համապատասխանում սույն Երաշխիքի պայմաններին կամ

բ) Պահանջը ներկայացվել է Երաշխիքի գործողության ժամկետի ավարտից հետո

11. Երաշխիք տվող անձը Պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին գրավոր տեղեկացնում է Բենեֆիցիարին:

12. Սույն Երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

13. Սույն Երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Կորպորատիվ հաճախորդների
գծով տնօրեն՝ Գագիկ Սահակյան